Բազրատունյաց





Հայաստան

Նախագծային աշխատանք

Թեմա՝ Բագրատունյաց Հայաստան
Կարգա՝ Հայոց պատմություն
Ուսուցիչ՝ Գոհար Գևորգյան
Աշակերտներ՝ Շահինյան Մարգարիտա
Ախոյան Լիա

Բագրատունիների արքայատոհմի հաստատումը

Բագրատունյաց Հայաստանի հաստատումը և իրավիճակը տարածաշրջանում

Ընթացիկ թագավորությունների առաջացումը

Շինարար թագավորների գործունեությունը

Անիի թագավորության թուլացումն ու անկումը

Նպատակ

Բարև ձեզ Ես Շահինյան Մարգարիտան եմ,իսկ ես Ախոյան Լիան եմ այս տարի նախագծային աշխատանքի համար ընտրել ենք Հայոց պատմությունը քանի,որ մեզ շատ հետաքրքրեց Բագրատունյաց Հայաստանի պատմությունը,որը որ շատ մեծ դեր է թողել հայ ժողովրդի ապագա զարգացմն մեջ: Մեր նախագծային աշխատանքի նպատակն է Ձեզ պատմել Բագրատունյաց Հայաստանի հաստատումը,զարգացումը,տնտեսական կյանքը և անկումը:

Միասին կհայտնվենք 885 թվականում և կշարունակենք այս արքայատոհմի ողջ պատմությունը մինչև իր թուլացումն ու անկումը: Ճանապարհին կհանդիպենք բազում թշնամիների որոնք կփորձեն խոչընդոտել մեր ճանապարհը,սակայն կփորձենք դուրս գալ այդ դժվար իրավիճակներից: Ասես թե հայտնվել ենք լաբիրինթոսում որից դուրս գալու համար մեզ պետք կգա ճկուն մտածելակերպ,մի քիչ խիզախություն, համբերություն:

Բագրատունիների արքայատոհմի հայտնությունը

Ըստ Մովսես Խորենացու,Բագրատունիները սերում են հրեա Շամբատից,որի շառավիղներից Շամբատ Բագրատին Հայոց թագավոր Վաղարշակը տվել է թագադիր և ասպետի պաշտոն և տոհմը կոչվել է նրա անունով Բագրատունի: Արշակունիների թագավորության վերացումից հետո Բագրատունիները Այրարատ նահանգում տիրացել են Կոգովիտ գավառին: 5-րդ դարի վերջին Սահակ Բագրատունին դարձել է Հայոց մարզպան: 7-ից 8-րդ դարերում Բագրատունիները մրցակցության մեջ էին Մամիկոնյանների հետ հանուն քաղաքական առաջնության: Այս շրջանում Բագրատունիները մեծ ազդեցություն են ունեցել Այրարատի Ոստան Հայոց գավառում,որին տիրել են 9-րդ դարի կեսերին: 8-րդ դարում Հայոց իշխանի պաշտոնը վարել են Բագրատունիները:

Նրանք քաղաքական ասպարեզից աստիճանաբար դուրս են վանել Մամիկոնյաններին: Բագրատունիների տիրույթները ավելի են ընդարձակվել 9-րդ դարի սկզբին, երբ Աշոտ Մսակեր Բագրատունի ձեռք է բերել Շիրակը,Արքունիքը,Տաղիրը,Մոկքը,Սասունը,Շիմշատը: Այս շրջանում Բագրատունիների տոհմական կենտրոնը Բագարանն էր: 9-րդ դարից Բագրատունիները դարձել են ամենաազդեցիկ տոհմը և ժառանգաբար կառավարել երկիրը,նախ որպես Հայոց իշխան,ապա Իշխանից իշխան և վերջապես 885թ-ից՝ Հայոց թագավոր: Բագրատունիների արքայատոհմը հիմնադրել է Աշոտ Ա Մեծ արքան: 869թ կաթողիկոս Զաքարիա Ա Զոգեցու նախաձեռնությամբ հրավիրված հայ իշխանների ժողովը վճռել է Աշոտին հռչակել թագավոր և

Հայաստանի թագավորությունը ճանաչելու պահանջով դիմում է Խալիֆին: 885թ Խալիֆը ստիպված արքայական թագ է ուղարկել Աշոտ Բագրատունուն և նրան ճանաչել Հայոց,Վրացու Աղվանից արքա: Կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցին 885թ-ին երկիրի իշխանների ու հյուրջրի նկատմամբ Բագարանում Աշոտ Բագրատունուն օծել է Հայոց թագավոր, որով միջազգային ճանաչում է ստացել Հայաստանի փաստական անկախությունը և վերականգնվել է 457 տարի առաջ կործանված Հայկական թագավորությունը: Աշոտ Ա-ն ամրապնդել է Հայոց թագավորությանը և նրա քաղաքականությունը շարունակել է որդին՝Սմբատ Ա-ն:

Սմբատ Ա-ի որդին՝ Աշոտ Բ Երկաթը (914-922թթ.) տեղական պայքարում վտարել է արաբներին և վերականգնել է երկիրը: Ավանդական Աշոտ Բ-ին հաջորդում է Հոռոմոս Կարս ի կարգավորիչ արքան: Բագրատունիները ունեցել են մի քանի ճյուղավորում, որոնք առանձին-առանձին որոշ ինքնուրույն ունեցող քաղաքական միավորներ 11-րդ դարում: Նրանք էին՝Տարոնի,Մոկքի,Կարսի,և Տաշիր-Զորաբերդի թագավորությունները:Նրանց մասին հիշատակներ կա մինչև 16-րդ դարի սկիզբը:



Բագրատունյաց Հայաստանի հաստատումը և իրավիճակը տարածաշրջանում

9-րդ դարի կեսերին Արաբական Խալիֆայությանը ենթակա երկրներում, այդ թվում և Հայաստանում,ավելի էր զորանում Արաբական լուծը թոթափելու ձգտումը: Արաբական Խալիֆայությունը անկում էր ապրում: Հայաստանում ևս բռնկվեցին ժողովրդական ապստամբություններ: Արտաքին քաղաքական իրադարձությունները բարեպաստ էր անկախանալու համար: Հայ նախարարները զորեղացել էին թե տնտեսապես,թե ռազմականապես: Եվ նրանք էլ գլխավորեցին համաժողովական շարժումը: Հայ ժողովրդի բոլոր խավերը միասնական էին, և բոլորն էլ երազում էին անկախություն: Ամենից հմտորեն օգտվում էին Բագրատունիները: Նրանք ձգտում էին իրենց իշխանությունն ու ազդեցությունը տարածել Կովկասում: Խալիֆայությանը համոզելով,որ բռնությամբ հնարավոր չէ պահել հայ ժողովրդին: 862թ նա նշանակվեց Հայոց իշխան: Դա նշանակում [illegible] հարկերը կրճատվեցին 3 անգամ: Աշոտ Բագրատունին կարողացավ իր իշխանությունը տարածել Արծրունի,Սյունի,Արցախի և այլ նշանավոր իշխանական տների վրա: Նրա իշխանությունը ընդունեցին վրաց և աղվանցի իշխանները:Աշոտը հայոց բանակի թիվը հասցրեց 40 հազարի: Նա Աբասին նշանակեց սպարապետ: Բարատունիների ձեռքն անցավ երկրի վարչական,տնտեսական և ռազմական իշխանությունները: Հայոց կաթողիկոս Զաքար Զագեցու նախաձեռնությամբ 869թ հայ իշխանների հատուկ ժողով հրավիրեց,որը միահամառ որոշեց Աշոտ Բագրատունուն հռչակել Հայոց թագավոր: Միաժամանակ ժողովը դիմեց Խալիֆին՝ Հայոց թագավորության հռչակման համար, բայց Խալիֆայությունը երկար ժամանակ ձգձգում էր:

Բյուզանդիան իր հակառակորդին Արաբական Խալիֆայությունը թուլացնելու նպատակով խրախուսում էր Հայաստանի անկախանալը, և շտապեց դաշինք կնքել նրա հետ: 874թ-ին Բյուզանդիական կայսր հայազգի Վասիլ Ա-ն հատուկ պատգամավորություն է ուղարկում Աշոտ Բագրատունու մոտ: Կայսրը հայտնում է, որ ինքը ծագում է հայ Արշակունիներից, և քանի որ Բագրատունիները Հայաստանի թագադիր ասպետներն են եղել, նրանցից թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամությանը՝ Աշոտը թագ է ուղարկում Վասիլ Ա-ին:

ՀԱՅ ԲԱԴԻՊԱՏՈՒԹԻՒՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
IX դարի վերջին և X դարի սկզբին
Մասշտաբ 1: 6 500 000

Հայաստանը 9-րդ դարի 60ական թթ-ին վերականգնեց իր անկախությունը՝ շարունակելով ձևականորեն գտնվել Արմինիա փոխարքայության կազմում: Այս ամենի հետ Խալիֆայությունը ոչ մի կերպ չէր հաշտվում: Խալիֆի հանձնարարությամբ Հայաստան է ուղարկվում նոր ոստիկան Ահմադին: Հայաստանի արաբ ամիրների հետ դավադրություն է կազմակերպում Աշոտի դեմ: Նրանք որոշում են հայ իշխանների բարեկամական հրավեր անեն Դվին և ոչնչացնեն: Սակայն Աշոտ Բագրատունին հետևում էր արաբների գործողություններին: Նրա մարդիկ ձերբակալում են ոստիկանի սուրհանդակներին, որոնց մոտ հայտնաբերում են Ահմադի նամակը՝ ուղղված արաբ ամիրներին: Աշոտը հայ իշխաններին պատվիրում է իր իշխաններին պատրաստ սպասել իր հրամանին: Ինքը գնում է ոստիկանի մոտ, իսկ սպարապետ Աբասին հանձնարարում է զորքով մոտենալ Դվին: Դավադրության նշանակված օրը հայ իշխանների փոխարեն Դվին է մտնում հայկական զորքը: Սպարապետ Աբասը մտնում է ոստիկանի վրանը և ցույց տալիս նրա գաղտնի նամակը: Սարսափած արաբ ոստիկանին դուրս են բերում վրանից և ձերբակալում: Արաբական զորքը զինաթափում են և երկրից դուրս քշում: Ոստիկանին ձիու փոխարեն նստեցնում են ջորու վրա, տանում մինչև Հայաստան և ուղարկում <<այնտեղ, որտեղից եկել էր>>:

Նոր Խալիֆը 885թ-ին արքայական թագ ու թանկարժեք հանդերձանքներ ուղարկեց Աշոտ Բագրատունուն՝ ճանաչելով նրան Հայոց թագավոր: Բյուզանդիայի Վասիլ Ա կայսրը ևս շտապեց ճանաչել Աշոտի գահակալությունը: Նա ևս արքայական թագ ուղարկեց և դաշինք կնքեց Աշոտի հետ: Հայաստանի իշխանների և հարևան երկրներից եկած հյուրերի ներկայությամբ, Բագարան քաղաքում, մեծ հանդիսավորությամբ Աշոտ Բագրատունին կաթողիկոս Գևորգ Գառնեցու կողմից օծվեց Հայոց թագավոր: Հայաստանի տարիներ առաջ հաստատված անկախությունը միջազգային ճանաչում ստացավ: Հիմնվեց Հայաստանի Բագրատունյաց թագավորությունը (885-ից 1045թթ-ը) և վերականգնվեց ավելի քանի 450 տարի առաջ վերացած Հայկական պետությունը: Դա պատմական շրջադարձային նշանակություն ունեցող երևույթ էր և մեծապես նպաստեց Հայաստանի հետագա վերելքին:

Բագրատունյաց թագավորությունը իր ծաղկման շրջանում ներառել է Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը: Այն իր շուրջն էր համախմբել ոչ միայն Հայաստանը,այլև Վրաց թագավորության առաջացումը:

Ենթակա թագավորությունների առաջացումը

Հայոց Սմբատ 1-ին թագավորը,թագ տալով Վրաց իշխան Ատրներսեհին և Հայոց Արևելքից կողմերի իշխան Համամին,ավատատիրական անջատողական կոչ նախապատրաստվեց: Նրանք ենթարկվում էին 1-ին,որը իրեն կոչում էր <<Տիեզերակալ,թագավոր Հայոց և Վրաց>>: 908թ Արծրունիների գլխավորությամբ,թագավորություն վերածեց Վասպուրականը: Աշոտ 2-րդ Երկաթի հաջորդները,որ լուրջ քայլեր ձեռնարկեցին ուժեղացնելու կենտրոնական իշխանությունը,հանդիպեցին ոչ միայն իշխանական դասի համառ դիմադրությունը ,այլ ձև արտաքին ուժերի դիվանագիտական և զինվորական միջամտությունը: Նրանք հասան նկատելի հաջողությունների,սակայն ավատատիրական անջատական ձկտումներին ավելի ուժեղ գտնվեցին:10-րդ դարի սկզբերից սկսած մեծ ինքնավարություն ունեցող թագավորություններ և իշխանություններ: Հիշյալ իշխանություններից ամենաընդարձակը և ամենազորեղը Վասպուրականի Արծրունյաց իշխանությունը,որը 908թ Գագիկ Ա Արծրունու կողմից թագավորություն հռչակվեց Ատրպատականը ամիրների օգնությամբ: Այն ընդգրկում էր Վանա և Կապուտան գետերի միջև ընկած ընդարձակ տարածքում: Գ. Արծրունին քիչ ժամանակ անց ընդունեց Բագրատունիների գերիշխանությունը: Արծունիների օրոք Վասպուրականը մշակութային և տնտեսական վերելք ապրեց: Ախթամար կղզին արհեստականորեն մեծացվեց: Հետագայում ջրի բարձրացման պատճառով քաղաքը անցավ ջրի տակ:11-րդ դարում քաղաքը ունեցել է 8 քաղաք,72 բերդ,115 վանք և 4000-ից ավել գյուղ:Ամենահամեստ հաշվարկով 1 քաղաքը ունեցել է 1000000 բնակիչ:

Մեր շեներում Բագրատունին թագավոր հռչակվեց 961թ-ին: Կոնդակ Անիի թագավորությունը: Իր իշխանության գագաթնակետին հասավ Դավիթ Անհաղթի գահակալության թագավորության ընթացքում 989-1048թթ: Նա մեծապես ընդարձակեց թագավորության տարածքը:Մայարաքաղաք դարձավ Լոռի բերդաքաղաքը:

ԱԲԽԱԶԻԱ
(Արևմտյան Վրաստան)
Քութայիս
Քարթլի
Սգխեթ
Տփղիս
ՏՓՂԻՍԻ
ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱԽԵԹ-ՀԵՐԵԹԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Արտանուջ
Գանձակ
Ճադդադյաններ
ԱՌԱՆ
Պարտավ
ԲԻԶԱՆԴԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՄՐՑԱԿ
Կայսրերի
ամիրպետություն
Մանազկերտ
Մուշ
Վանա լիճ
Վան
Նասրան
ՄՈԿՔ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
Թավրիզ
ՍԱԼԱՐԻՆԵՐԻ
ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ
Կասպիական
ՄՐՎԱՆԻՆԵՐԻ
ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ
Հալեպ
Մոսուլ
ՀԱՄԴԱՆԻՆԵՐԻ
ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆ

987թ իրեն թագավոր հռչակեց Սմբատը:1 տարի անց նա ճանաչվեց Հայոց պետության գերագույն իշխան:Այն գոյատեվեց շուրջ 2 դար:

Բյունիքի թագավորությունը մեծ ծաղկում ապրեց Վասակ թագավորի օրոք:Թագավորությունն ուներն43 ամրոց,48վանք,1000-ից ավել գյուղ:Քաղաքային կյանքը թույլ էր զարգացած:Հիշատակվում է միայն Կապանը:

Ենթակա թագավորությունը հանդես գալով Հայոց գահակալների տիրությունները կենտրոնացած էին մայրաքաղաք Անիի շրջակա գավառներում:Պատմաբաններն այն երկրի մայրքաղաքի անունով կոչվում է Անիի թագավորությունը:

Սակայն շատ հաճախ այս ենթակա թագավորությաունները չէին ենթարկվում Բագրատունիներին: Այս մասնատվածությունը հետագայում ունեցավ անդառնալի հետևանքներ:

Շինարար թագավորների գործունեություն

Երկրում հաստատված խաղաղության պայմաններում 10-րդ դարի 30-ական թվականներից Բագրատունյաց թագավորությունն ավելի է բարգավաճում ու հզորանում, մեծանում է նրա ազդեցությունը հարևան պետական կազմավորումների քաղաքական կյանքում: Այդ պատճառով անհարժեշտություն է առաջանում հիմնել պետության համար մշտական կենտրոն: Բագրատունիների նախկին նստավայրերը՝ Բագարանը, Շիրակավանը, Կարսը չունեին համախմբիչ հնարավորություն, քանի որ հեռու էին գտնվում Բագրատունյաց թագավորության կենտրոնական շրջաններից:

Աշոտ Գ-ն Դվինի գրավումով փորձում էր լուծել մնայուն մայրաքաղաքի հարցը, քանի որ Բագրատունի առաջին չորս գահակալների օրոք փոխվել էին թագավորության երեք կենտրոններ (Բագարան, Երազգավորս և Կարս): Անհաջողության մատնվելով իր այս ձեռնարկում՝ նա կենտրոնացավ զարգացող Անիի վրա: Այս ժամանակաշրջանում Անին կարևոր առևտրական հանգույց էր հարավ-արևելքից Հայաստան մտնող և Դվինով դեպի Տրապիզոն ու Կոստանդնուպոլիս ընթացող ճանապարհի վրա, որի պատճառով Դվինի դարպասներից մեկը կոչվում էր «Բաբ Անի» (Անիի դուռ): Անին մայրաքաղաք հռչակվեց 961 թվականին: Անիի մայրաքաղաք հռչակման պատմական նշանակությունը հաշվի առնելով՝ Լեոն դրանից հետո՝ մինչև թագավորության անկումը, ընկած պատմափուլը կոչում է «Անիական»: Մայրաքաղաքի ընտրությունը Անիի վրա կանգ առնելու պատճառ է համարում նրա՝ թագավորության կենտրոնում և Բագրատունյաց տիրույթներում գտնվելը, ինչպես նաև բնական անմատույց պայմաններով օժտված լինելը: Նա նաև կարծում է, որ նախկինում Բագրատունի արքաներից յուրաքանչյուրը նստավայրը տեղափոխում էր իր տիրույթը, բայց Աշոտ Գ-ին հաջողվեց անել այնպես, որ չնայած հետագա թագավորները ևս ունեին առանձին նստոց, սակայն մայրաքաղաքն այնտեղ չտեղափոխեցին:

Մայրաքաղաք դառնալուց հետո քաղաքի աճն արագ ընթացք ստացավ: Ըստ Մխիթար Անեցու՝ Անիի՝ մայրաքաղաք հռչակվելուց հետո Աշոտը «շինէ զՓոքր քաղաքն», իսկ ըստ «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» հեղինակի ու Վարդան վարդապետի՝ «Սա (Աշոտը - Ա.Ե.) փոքր պարիսպ շինեաց յԱնւոյ»: Կարելի է եզրակացնել, որ Մխիթար Անեցու «փոքր քաղաք»-ն իրականում պետք է լիներ «փոքր պարիսպ», որը ըստ

գտնվում էր միջնաբերդը: Հայկական աղբյուրների համաձայն՝ Անին ունեցել է 100-200 հազար բնակիչ: Այդ ժամանակ աշխարհում կային մի քանի խոշոր քաղաքներ՝ Բաղդադը (Միջագետք), Դամասկոսը (Սիրիա), Կոստանդնուպոլիսը (Բյուզանդական կայսրություն), Կորդովան (Արաբական Իսպանիա):

Անին լքվել է 1319 թվականի երկրաշարժից հետո: Հայերը գաղթավայրեր են հիմնել հայրենիքի սահմաններից դուրս՝ Ղրիմում, Բալկանյան թերակղզում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Ղրիմից մի մասը տեղափոխվել է Կ. Պոլիս, Գալիցիա ու Լեհաստան, մի այլ խումբ՝ ավելի ուշ Դոն գետի ափին հիմնել է Նոր Նախիջևան քաղաքը:



Ավանդությունը Անի քաղաքի վերջնական ամայացումը կապում է 1319 թվականի երկրաշարժի հետ, սակայն Երևանի արձանագրություններից մեկում անեցի Շաբայդինը 1364 թվականին անիծում է Անին քանդողներին: 14-15-րդ դարերում կտրված դրամները նույնպես ապացուցում են, որ կյանքը քաղաքում շարունակվել է: 16-րդ դարում Անին արդեն փոքրիկ գյուղ էր: Ըստ երևույթին, քաղաքին մեծ հարված էին հասցրել Լենկթեմուրի արշավանքները: 18-րդ դարում Անին ավերակների կույտ էր և

Վարդան վարդապետի, կառուցվել է 964-965 թվականներին: Պարսպի երկայնքով կառուցվել էին մի քանի աշտարակներ, որոնցում մատուռներ կային:

Անիում 961 թվականին գումարվում է ժողով՝ Հայաստանի բոլոր իշխանների, Աշոտ Գ թագավորի, Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի (946-968) ու եպիսկոպոսների մասնակցությամբ: Ժողովին ներկա էին նաև իշխաններ, զորականներ՝ Աղվանից Հովհաննես կաթողիկոսի և 40 եպիսկոպոսների հետ: Ժողովի հրավիրման նպատակն էր Աշոտ Գ-ի թագադրությունը: Այսպես, 961 թվականին տեղի է ունեցել Անին մայրաքաղաք հռչակելու և թագավորական գահն այնտեղ հաստատելու տոնական հանդեսը:Գագիկ 1-ի օրոք զարգացել է տնտեսությունը,արվեստը,ներքին և արտաքին առևտուրը:Բարգավաճվել է Անին,Դվինը,Կարսը:Տնտեսությունը զարգացել է նաև ի շնորհիվ պահլավունների:Նրանց ջանքերի արդյունքներն են Բջնին,Մարմաշենը,Ամբերդը:Նրա կնոջ հովանավորությամբ 1001թ կառուցվել է Անիի Սուրբ Կաթողիկե եկեղեցին:

987թ Սմբատ 2-ը թագավորությանն է միացրել Դվինի ամիրությունը:989թ Սմբատ 2-ին հանձնարարվել է Անիի պարիսպի երկրորդ գծի կառուցումը:930թ Աբասի հրամանով կառուցվում է Սուրբ Առաքելոց եկեղեցին,որի շինարարությունը ավարտվել է 942թ և այն կանգուն է առ այսօր:Նրա օրոք կառսը հռչակվեց թագավորություն:



Անի

Անի, միջնադարյան հայկական ավերված բերդաքաղաք, որը ներկայումս գտնվում է հայ-թուրքական շփման գծի անմիջապես կողքին՝ Թուրքիայի Հանրապետության Կարսի մարզում, Հայաստանի Շիրակի մարզի Նորշեն և Անիավան գյուղերի դիմաց: Կառուցվել է Ախուրյան գետի աջ ափին՝ եռանկյունաձև սարահարթի վրա: Այժմ այն բնակեցված չէ: Նրանից ոչ հեռու գտնվում է Օշաքլը գյուղը, որի անունով երբեմն թուրքերը կոչում են Անին:

Անիի մասին առաջին հիշատակումները թվագրվում են վաղ միջնադարին՝ 6-րդ դարին՝ որպես Կամսարական իշխանական տան ամրոցներից մեկը: Հայ մատենագիրներից այդ մասին են վկայում Եղիշեն ու Ղազար Փարպեցին: Ավատատիրական հարաբերությունների սկզբնավորման շրջանում Մեծ Հայքը գտնվում էր Արշակունիների թագավորության ներքո: Արաբական տիրապետության ընթացքում՝ 9-րդ դարի սկզբին, Հայոց իշխան Աշոտ Բագրատունի Մսակերը (791-826) Կամսարականներից գնել է Արշարունիք և Շիրակ գավառները՝ Անի ամրոցով:

Զարգացած միջնադարում՝ 961-1045 թվականներին, Անին Բագրատունիների թագավորության մայրաքաղաքն էր: Վերջինիս սահմաններում ընդգրկված էին Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր գավառները՝ Սևանա, Վանա և Ուրմիո լճերի միջև: 13-րդ դարի պատմիչ Սիբթ իբն ալ-Ջաուզին հայտնում է, որ նախքան սելջուկների կողմից Հայաստանի գրավումը (Մանազկերտի ճակատամարտ), հայոց մայրաքաղաքի բնակչությունը հասնում էր մեկ միլիոն մարդու, որոնց մի մասը սպանվում է, իսկ կենդանի մնացածները գերի են վերցվում: Ավելի ուշ շրջանում, կապված Վրաց թագավորության զորեղացման հետ, Արևելյան Հայաստանում ստեղծվում է Զաքարյան իշխանապետությունը, որի կենտրոնը նորից դառնում է Անին:

Անին հայտնի է որպես «հազար ու մի եկեղեցիների քաղաք», որոնցից առավել հայտնի էր կաթողիկոսանիստ Մայր տաճարը: Միջնադարում այստեղով էին անցնում բազմաթիվ առևտրական ճանապարհներ: Քաղաքում կային բազմաթիվ պալատներ ու հասարակական կառույցներ: Անին շրջապատված էր երկշերտ՝ Աշոտաշեն ու Սմբատաշեն պարիսպներով, իսկ քաղաքի կենտրոնում

պատկանում էր թուրք բեկերին: 1878 թվականին այն անցավ Ռուսաստանին: 1920 թվականի Ալեքսանդրապոլի պայմանագրով ՀՀ Դաշնակցական կառավարությունը հանձնեց Թուրքիային:Անիի պեղումների ժամանակ գտնվել է Գագիկ 1-ի արձանը,որի գլխին կա լայն փաթաթված սպիտակ չալմա,հագին երկարավուն արաբական կարմիր խալաթ և մեջքի փաթաթան:Արաբական տարազն խալիֆայության կողմից ճանաչված լինելու նշանն է:

Անիի թագավորության թուլացումն ու անկումը

Անիի թագավորության թուլացումը ուներ տարբեր պատճառներ: 1-ինը դա Բյուզանդիայի կողմից մեծ հարձակումներն էին,որոնք խանգարում էին պայքարել սելջուկների դեմ: 2-ը սելջուկների հարձակումներն էին:Նրանք եկել էին Չինաստանին արևմուտքից:նրանք ավերել էին ամենինչ ինչ տեսել էին իրենց ճանապահին և հասել էին մինչև Հայաստան: Անդ ժամանակ պայքարում էին բոլորը:Իսկ 3-րդ պատճառը Գագիկ Ա-ի երկու որդիների կռիվն էր տարածքի համար: Գագիկ առաջինի որդիների պայքարը վերաճեց զինված ընդհարման, որին միջամտեցին հարևան պետությունները: Ի վերջո հայոց սպարապետ Վահրամ Պահլավունու և վրաց թագավորի միջամտությամբ եղբայրները հաշտվեց: Ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատը, որին պաշտպանում էր պալատական վերնախավը, ժառանգեց գահը, ստանալով Անի քաղաքը, Շիրակը և հարևան գավառները: Նրա կրտսեր եղբայր, եռանդուն և ռազմիկ Աշոտ 4-րդին բաժին ընկան Անիի թագավորության հարավային և արևելյան շրջանները: Հովհաննես-Սմբատի մահվանից հետո Աշոտը ժառանգելու էր նրա տիրույթները: Փաստորեն՝ Անիի թագավորությունը մասնատվեց, իսկ նրա ենթակա թագավորությունները գործնականում անկախ դարձան:
Ստեղծված դրությունից անմիջապես օգտվեց



Բյուզանդիան: Շուտով նա գրավեց Տայքը: Տայքը վերադարձնելու փորձը ձախողվեց: 1022թ-ին վրաց թագավորությունը ստիպված էր Տրապիզոնում հաշտության բանակցություններ սկել բյուզանդիացիների հետ: Անիի թագավորության կողմից բանակցություններին մասնակցեց Հայոց Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: Նա պատկանում էր բյուզանդամետ հոսանքի: Եվ երբ բյուզանդական Վասիլ 2-րդ կայսրը պահանջեց, որ Անիի թագավորությունը հանձնվի կայսրությանը, Հովհաննես-Սմբատը համաձայնեց: Նա ստորագրեց մի խայտառակ կտակ, որով իր տիրույթներն իր մահից հետո պետք է անցնեին Բյուզանդիային: Դրանով Հայոց թագավորությունը հայտնվեց կործանման եզրին:

Հետ վերցրեց արքունու զանձերը Սարգսից և նաև Անին գրավելու բյուզանդացիների ձեռնարկած հետագա արշավանքները: Տեսնելով, որ ուժով հաջողության չի կարողանում հասնել, Բյուզանդիան փոխեց իր քաղաքականությունը: Գագիկ Բ-ն սկսեց վարել անխերեմ քաղաքականություն, որը հատվելով Սարգիսի խոստումներին նրան ազատ արձակեց և իրեն մոտեցրեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսին:

Կայսրը, իբր թե հարցեր լուծելու համար Գագիկ Բ-ին հրավիրեց Կոստանդնուպոլիս: Սպարապետ Վահրամ Պահլավունին և Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և նրանց կողմնակիցները դեմ էին Հայոց թագավորի կոստանդնուպոլիս գնալուն: Սկզբում նրանց հորդորող Գագիկը հրաժարվեց հրավերից հասկանալով, որ դա խարդախություն է: Սակայն շատ չանցած նա տեղի տվեց Կաթողիկոսի և Սարգսի համառ հորդորներին և 1044թ-ին մեկնեց Բյուզանդիայի մայրաքաղաք: Բանակցությունների փոխարեն նրանից պահանջեցին Անին իր շրջակայքով, ինչը Գագիկ Բ-ն խիզախորեն մերժեց: Նա կայսրին ամոթանք տվեց հետևյալ խոսքերով (հայոց տան տերն ու թագավորն ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը որովհետև դու ինձ խաբեբայությամբ ես բերել Կոստանդնուպոլիս): Դրանից հետո կայսրը նրան կալանավորեց և չթողեց երկիր վերադառնալ: Կրկին Անի ուղարկված Բյուզանդական զորքերը դարձյալ պարտություն կրեցին:Սակայն հաղթանակն անարդյունք եղավ,քանի որ քաղաքն առանց կռվի հանձնվեց Բյուզանդիային:Հայաստանի Բագրատունյաց կենտրոնական թագավորությունը ընկավ:Այն մեծ հարված էր Հայոց պետականությանը,քանի որ երկար դարեր հայ ժողովուրդը չկարողացավ բուն Հայաստանում վերականգնել իր պետականությունը:

Վերջնարդյունք

Մեր նախագծային աշխատանքի վերջարդյունքում պետք է նշել,որ թեև մինչև 885թ՝մոտ 460 տարի պետականություն չենք ունեցել,Բագրատունյաց Հայաստանով հիմնվեց հայոց պետականությունը:այն դարջավ քրիստոնյա արևելքի հզորագույն թագավորություններից,սակայն դարջավ հայոց պետականության վերձին դրսևորումը պատմական հայրենիքումը:Այն իր շուրջ է համախմբել որ միայն Հայաստանը,այլև նպաստել է Վրաց թագավորության առաջացմանը:

Բագրատունյաց թագավորության ժամանակ հայերը ունեցել են շատ հաջողություններ,վերադրարջրել են պատմական տարածքները,հետ մղել արաբներին Հայաստանից:Նաև կառուցել վանքեր,քաղաքներ,տաճարներ,պարիսպներ:

Շնորհակալություն եմ հայտնում Ընկեր Գևորգյանին մեր աշխատանքը պատրաստելու ամբողջ ընթացքում օգնելու,քաջարելու,ոգեշնչելու համար:Մեզ համար մեծ պատիվ էր նախագծային աշխատանքը ընտրելու<<Հայոց պատմություն>> առարկան:

Շնորհակալություն